

ԲԱՃԱՆՈՐԴԱԿՐՈՒԹԻՒՆ

| | |
|---------------------------|--------|
| Պոչտարիոյ համար | 12 ֆր. |
| սարեկան վեցամսեայ | 6 " |
| Արտասահմանի համար սարեկան | 15 " |
| վեցամսեայ | 8 " |
| Անկերիկայի համար սարեկան | 3 ֆր. |
| վեցամսեայ | 1 50 " |

Իսկուհական տղա սուս քին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սակրիս է. երեսին աւելի սկզբակերտ համար 20 0/0 զեղչ կրայ:

Վառնայի համար ձևի 10 սակրիս

ՇԱՐՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՐԻՆ. ԲԱՂԱԲԱՎԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵԻՇՄԱԹԻ ԵՒ ՇԱՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ

«ՇԱՐՈՒՄ» Ի ԲԱՃԱՆՈՐԴ ԿՐՈՒԹՅԱՆ ԲԱՃԱՆԳԻՆԸ ՊԷՏԻ Է ԿԱՆԿԵՐ ԿՆԱՐԷ

Նամակ եւ դրամ դրոշմի խմբագրութեան հասցիին

Редакция на вѣтъникъ «Шаржумъ» Варна

Rédaction du journal «Charjoun» Yarna (Bulgarie)

Պոչտարիոյ համար ձևի 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձևի 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չիս տպար

ՄԻԱՅՆ ԺՈՂՈՎՈՒՐԸ ԶԷ ՄԵՂԱԿՈՐ

Անցեալ օրվան յօգուածում, մեր մամուլի խեղճ կացութեան առթիւ, մենք մեզադրում էինք հայ ժողովրդին. սակայն միայն ժողովուրդը չէ մեղաւոր, այլ և իրենք՝ մամուլի վարիչները, մասնաւոր արտասահմանում:

Արտասահմանում, մանաւանդ վերջին տարիների ընթացքում, եւրոպական, Ամերիկեան եւ ասիական հայ գաղութներում լոյս տեսան ու մարեցին բազմաթիւ հայ թերթեր առանց որոշ հետք թողելու:

Տեղից վեր կենողը մեծ մասամբ շարժաւոր, ամեն գործերի անընդունակ, մտաւոր պաշարից բոլորովին զուրկ, բարոյական հաստատուն սկզբունքներից բոլորովին ազատ, ասպարէզ իշխան, թերթեր հրատարակեցին, վճարող տարրի փոքրը կորզեցին և կարճատեւ հրատարակումից յետոյ գաղափարներին. ու արտասահմանի վճարելու ընդունակ, թերթերի պահանջ զգացող հայ տարրը եկաւ այն եղբակացութեան, որ հայ խմբագիրները, մուրացկանների և խաբեբանների նման ասպարէզ են իշխում մի քանի ամիս իրենց գոյութիւնը հայ հասարակութեան հաշտով քարշ տալու, թէ մամուլը, թէ խմբագրութիւնը և թէ ժողովրդին նւաստացնող տենչով սողորված:

Հայ հասարակութեան լաւ մասի մէջ ստեղծվեց մի համոզմունք, թէ հայ թերթը արտասահմանում յարատեւել չէ կարող, և նախավճար բաժանորդագիրը անպատճառ պէտք է կորստի մուրացկան խմբագիրների այդ վոճմակը ամեն միջոց գործ դրելով խմբագրական վարկը կոտորել, առանց պահանջելու թերթեր զրկելով այս ու այն աղային կամ աղաչելով ու պաղատելով որ թերթ ստանան թէկուզ տարվան վերջը վճարելու պայ-

մանով. խմբագիրներ գտնվեցին որ գրքեր ու բոջուրներ շաղկած ճամբորդեցին այս ու այն քաղաք և երկիր, ու ստորնութիւնը ունեցան ամենախեղճ հային իսկ պաղատել գիրք գրենել, թերթի բաժանորդ գրվել: Աւ ժողովուրդը հասաւ այն եղբակացութեան, որ խմբագրութիւնը բաժան ծախելու պէս բան է, իսկ ճամբորդող, թափառաւոր շրջիկ ու մուրացիկ խմբագիրն բաժան քշելու միջնորդ:

Ռուսահայում ճամբորդելիս ոչ բաժանեցին գանձելու համար, Իրախայում մի քանի քաղաքներում Բուլղարիա հրատարակող թերթերի երկու խմբագիրների մասին այնպիսի ծիծաղելի, թերթը և խմբագրին նւաստացնող իրողութիւններ էին պատմում որ ես տմաշում էի իմ խմբագիր լինելու յայտենել: Ծանօթ մարդիկ կարծելով որ ես էլ իբր խմբագիր եկած եմ բաժանորդ մուրալուսի ապառիկները գանձելու համար յայտնում էին իրենց թերթանալու պատճառները. ես պարզում էի որ անձամբ բաժանեցին չեմ հաւաքում և բաժանորդ չեմ գրում, մնում էին զարմացած... Ինչպէս կարելի է խմբագիր լինել, բաժանորդ չը մուրալ, չը պաղատել, բաժանեցին չը գանձել: Աւ իմ այդ բացօթիկ գիրքը մուրացկան այդ խմբագիրների մէջ բարեկամներին այնքան էլ հաճելի չէր լինում, որովհետեւ նրանք ստում էին. միւս խմբագիրները կը ճամբորդեն բաժանորդ գտնելու և բաժանեցին գանձելու համար, ու հասարակութիւնը կը հարցնէ թէ հապա ի՞նչու «Շարժում» խմբագիրը չի ճամբորդեր. և ճամբորդողները կը պատասխանեն «Շարժում» խմբագիրը «Իաշնակցութեան» ամսական կըստանայ երկու հարիւր ֆրանք, Իաշնակցութիւնը թերթին ալ կօգնէ... եւն ուրիշ աւելի ազատտ չըպարտութիւններ: Աւ թից օգտելով յայտարար-

րոյ՝ եւնք որ «Շարժում» խմբագիրը Իաշնակցութիւնից իր խմբագրութեան ատենը բրէք ամ. սակայն ընդունած չէ, և «Շարժում» խմբագիրը ընդունած չէ: «Շարժում» խմբագիրը բուն յեղափոխական գործին ամբողջովին նւիրված տտեն իսկ Իաշնակցութիւնից իր ապրուստի համար ամսական 100—150 ֆրանքէն աւելի ծախսած չէ:

«Շարժում» խմբագիրը այսօր էլ ահագին պարտքերի տակ ծանրաբեռնված լինելով հանգերձ, խմբագրութեան պատիւը բարձր պահելու գաղափարով սողորված, երբէք թող չի տայ իրեն բաժանորդ մուրալ: Թերթը բաժանայի պէս ծախու հանել:

ՎԱՐԴՈ

ԲՈՒՄԻ ՄԷԿ ՃՈՒՐ

—o—

Պրանսայի նախարարապետ Բոմբին պաշտօն ստանձնելէն ի վեր Պրանսայի թէ արտաքին և թէ ներքին գործերը աւելի որոշ, ժամանակի յարմար պահանջներու ուղղութեամբ կընթանան, որը թէ մեծ օգուտը կը բերէ իրեն Պրանսային և թէ մեծ յոյսեր կը ծագեն այն ցեղեբուն մէջ, որոնք Պրանսայի զօրեղութիւնը և յառաջագիծութիւնը միշտ նպաստաւոր կը գտնան ամբողջ մարդկութեան համար:

Ներքին կարեւոր գործերն էին կրօնական ընկերակցութիւններու ոչնչացումը կամ աւելի ճիշդը կրթական գործէն չեզոքացումը: Վատիկանի մէջ դեսպանը չը պահելը, եկեղեցին պետութեանէն բաժնելու խնդիրը, որը հաստատուած է թէ կրկին Բոմբին յազմանակով պիտի վերջանայ: Արտաքին գործերէն կարեւորն են Անգլիոյ և Իտալիոյ հետ կնքուած համաձայնութիւնները պանապան վիճելի քաղաքական խնդիրներու և միջազգային իրաւարար տեսանի վերաբերմամբ, ու վերջերս Անգ-

լիոյ և Իտալիոյ միջեւ բախկեան նաւատորմի ճամբորդութեան ատեն ծագած վտանգաւոր միջադէպին խաղաղութեամբ վերջացնելը:

Անցեալ օր ալ միջազգային երեսփոխանակուն ժողով և իրաւարար տեսան բազմացողներուն խմբակին Սքանտինաւայի պատուիրակներուն ճաշկերոյթ տուած ատեն Գոմբ հետեւեալ մարտի ճառ մը արտասանած է որը ի հարկ է ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան վրայ շատ լաւ աւաւաւորութիւն պիտի գործէ:

Գոմբ յայտարարած է— Սքանտինաւայի պատուիրակներուն գալուստը՝ Պրանսայի կոչին, որ բոլոր ցեղերը միանալ կը հրաւիրէ, ամենալաւ պատասխանն է. Այս քերնայ կասկած չի թէ Պրանսայի յայ կամ կը նուազի, երբ ան պատերազմի հակառակորդ կը ներկայանայ, ու իր ճառը վերջացուցեր է հետեւեալ խօսքերով— բոլոր ժողովուրդներն ալ պիտի միանան այն քաղաքականութեան, որ կը համապատասխանի համայն մարդկութեան ըսկընունքին: Պրանսային քաջութիւնը անվիճելի է. անոր մը զամ պատերազմները իրեն ամէն ազգէ աւելի իրաւունք կուտան խաղաղութիւնը անփոփոխելի կանոն դարձնել իր արտաքին քաղաքականութեան մէջ, մեծցնելով միջազգային իրաւարար գաշնակցութիւններուն քանակութիւնը, որոնք խաղաղութեան ամենալաւ գործիքներն են:

ՄԻՊԵՐԻՈՅ ՏԵՂԵՐՈՒ

ԵՒ ԼՐՏՈՒՄ ԵՐԵՎԱՆ

Ռուս միապետութեան կրած ջախջախիչ հարուածները ոչ միայն ազգած են բուն ռուսներու եւ եւրոպական Ռուսիոյ ու կողմասի մէջ ապրող որոշ չափով քաղաքակրթւած ցեղերուն վրայ, այլեւ Սիպերիոյ կիսավայրերի ցեղերուն:

Միապետական ռէժիմի ծանր բռնուցքներուն եւ ոռուսական կնուտի հարուածներուն անտանելիութիւն-

նր առօրյապատակ կիսավայրենի ցեղերն ալ արդէն կըզգան եղեր, սակայն ուս քողաքներու ազգած սարսափը զանոնք ստիպած է եղեր լուել տակալ :

Թյսօր փոքրահասակ ճարտններուն ջախջախիչ հարուածները կորսնցուցած են Ռուսին եւ իր քողաքին ահեղիտեթիւնը, սողական դաւազանով մը մերկացուցած այդ ահուելի դազանները իրենց զօրութեան հմայքէն որ մինչեւ օրս կը վայելէին թող ժողովուրդներուն մէջ :

Ու այսօր Սիպերիոյ խորքերէն տեղեկութիւններ կը հասնին որ կիսավայրենի ցեղերը՝ եւքուսներ, բուրիաններ, շամաններ, սասօէաններ, օստիակներ եւ ուրիշ կիսավայրենի ցեղեր, որոնք մինչեւ օրս նախնական կայութեան մէջ կը գտնուէին եւ խաղաղ էին ու դո՛ս ուս վարչութիւնէն դժգոհութեան նշաններ կը ցուցնեն :

Աւելի Եւքուսներուն մէջ է որ դժգոհութեան նշաններ կը նկատուին. վերջերս Եւքուսներ նահանգի քանի մը տեղերը գաղտնի ժողովներ գումարուել են, քաղաքական, ճառեր արտասանուել են եւ քանի մը պահանջներ ձեւակերպուել են ուս կառավարութեան ուղղելու, որոնք հետեւեալներն են. —տեղական ինքնավարութիւն, դադարում Եւքուսներու նահանգը աքսորավայրի տեղ ծառայեցնել :

Ընտրուած է մասնաւոր պատգամաւորութիւն մը, որ պիտի երթայ ինքնապարտաբեր ծարին ներկայացնելու Եւքուսի ժողովրդին պահանջները : Այս փաստը կցելով Ռուսիոյ մէջ եղած սահմանադրական հոսանքին եւ զեմսթվոի ներկայացուցիչներուն ժողովին շատ բնորոշիչ փաստ մը կը ներկայանայ ուսական ներկային համար :

Պատերազմը դեռ չը վերջացած. Ռուսիա դեռ վերջնապէս չը յաղթուած ամէն ոք կերերայ տեղէն, կը շարժի դարերով ճնշող անգուժ միապետական ուժերի մը հիմերը քարու քանդ ընելու ձգտումները արտայայտել, հապա ինչ պիտի ըլլայ ուս միապետական կայսրութիւնը երբ Ռուսը յաղթուել, կամ վերջնապէս չը յաղթուելով անգամ չը կարենայ ձարոնը յաղթել, Անտանտի... ուժերն շտապումով մը պիտի տապալի ան... կամ թէ նիկոլա երկրորդը օգտուելով պատմութեան տրւած դասերէն եւ իր ներկայ անկեղծ ու Ռուսիոյ շահերուն իրապէս նուիրւած ազատական խորհրդակիցներուն մտիկ ընելով, առանց խոչըր քաթասթրօֆներու հանդիսատես ըլլալու սուսիկ փուսիկ պիտի հրաժարի մինչեւ օրս սրբագործուած միապետական շտապար իրաւունքներէն ու դառնայ սահմանադրական վեհապետ մը աման գնով ազատական վեհապետներուն շարքը մտնելու համար :

ԱԿԱՄԱՅ ԵՐԿՈՒ ԽՕՄԻ

Ասօր վառնայի սրճարաններուն մէջ յայտարարութիւն մը ցրուած էին. օրով հայ ընկերացող հասարակութեան միանգամայն կը գուժէր տիրահաշակ Տիրգրան ձգնաւորեանի շնորհիւ յայտարարութիւն մը եւ կաւետէր, կարեւոր անձնակազմով խմբուած խմբուորները մը եւ նոյն ձգնաւորեանի տնօրէնութեամբը նոր ծնւելիք «Հայաթերթ»-ին ուղղութեամբ «Արգաւանդ» անունով թերթի մը մտայնաբար աշխարհ գալը :

Իհարկէ ձգնաւորեան ճանչցողներուն համար պարզ է թէ «Արգաւանդ» ալ նոյնչափ անպտղաբեր պիտի ըլլայ հայութեան համար, որչափ «Հայաթերթը» եղաւ, ու թերեւս և անպտղաբեր ձգնաւորեանի համար, որովհետեւ այս անգամ խառնողները աւելի քիչ պիտի ըլլան. բայց անկասկած է որ այդ «Արգաւանդ» կրկին ժամադրավայրը պիտի ըլլայ կեղծ Առանձնաբերու, որոնք պիտի ուզենան «Մուրճ»-ի «Մշակ»-ի հաշւին խեղճ եւ միամիտ ժողովուրդը խաբել իրենց ուղեղային հրեանք արտադրութիւններով եւ վարկաբեկել իսկական Առանձնաբերը :

Ներդրութիւն կը խնդրեմ «Շարժում»-ի յարգելի ընկերացողներէն որ զիրենք կըստիպեմ զբաղիլ զանազան ձգնաւորեաններով եւ կեղծ Առանձնաբերով. բայց կուզեմ արդարանալ յայտնելով թէ ասանկ տեղեկերու յերու հանգիստ երբ յայտնի եւ զբաղան խաչադողները կը յանգնին ժողովուրդը ոչխարի մը պէս հարստահարել լուսթիւնը աններելի յանցանք մըն է :

Կարեւոր անձնակազմ բայց անյայտ իհարկէ, կազմուած այդ «Արգաւանդ» ծնուելիք թերթին խմբագրութիւնը ձգնաւորեանի կողմէ, որու յանձնուած է այդ թերթին մտաւորական եւ բարոյական վարումը, կը յայտարարէ թէ «Հայաթերթ»-ին մեռնելուն պատճառը բաժանորդներն են որոնք ձգնաւորեանը հինգ հազար ֆրանքի պարտքի տակ ձգեցին :

Անշուշտ կը յիշէք որ այսօր ժողովուրդը դատապարտող այդ ձգնաւորութեան երկու-երեք ամիս առաջ հանգուցեալ «Հայաթերթ»-ով կը յայտարարէր որ «Հայաթերթ»-ը իր տարին կը լրացնէ թէ բարոյապէս, թէ մշտաւորապէս եւ թէ նիւթապէս աւելի ուժով, որովհետեւ ժողովուրդը մեծ շափով քաջաբերց ու կը քաջալերէ :

Զիմա «Հայաթերթ»-ի կարճ կեանքին այս երկու դրուագներէն որուն մէջ ձգնաւորեան եւ իր ընկերները կը տուէին... իհարկէ երկուսին մէջ ալ, որովհետեւ ձգնաւորեանները առանց ստի չեն կրնար մարդկային ընկերութեան մէջ սպրդիլ, ուրտեղ միամիտ եւ խաբող տարր միշտ կը գտնուի :

Այդ ամբիբարտ խմբագրութեան յայտարարութեան կիմանքը որ ձգնաւորեան հինգ հազար ֆրանքի պարտքի տակ ընկած է, եթէ էն քիչը բաժանորդներէն ալ ձգնաւորեանի ձեռքը 2000 ֆրանք ինկած ըլլայ այն ատեն ձգնաւորեան մէկ քանի ամսուան մէջ, որովհետեւ թերթը երկար ամիսներ եւ երկու երեք անգամ ընդհատուեցաւ, թերթին համար ծախսած է 7000 ֆրանք : Բացարձակ օրու եւ խաբեղալութիւն պարտքնաէրբը եւ վճարող բաժանորդները միտնաբերու համար :

Վառնայի մէջ երկար տարիներէ իվեր երկու թերթեր կը հրատարակուէին «Շարժում» եւ «Իրաւունք» : Նոյն պայմաններուն մէջ հրատարակուող այդ թերթերը իրենց խմբագրներով, ընտանիքներով ոչ մէկ քանի ամսուան մէջ, այլ տարի ու կիսուան մէջ այդչափ խոչըր գումար չեն ծախսուել : Զր մոռնանք որ թերթերը տարբեր ուղղութիւններ ունին, ու

երկուսն ալ յարձակողական են : Մեռնող «Հայաթերթ»-ին եւ ծնւելիք «Արգաւանդ»-ին խմբագրութիւնը, որ յեղափոխութիւնը պաշտպանելու վտանգաւոր գերը ստանձնելու պատճառով գաղտնի պիտի մնայ, ինչպէս լուսայն կուզէ հասկնել վանքի հաւելբը գողցող սուտ ձգնաւորը, «Հայաթերթ»-ը մեռնելու պատճառը քարձողները, այսինքն բաժանորդները, լրագրութեան դաւաճաններ կանուանէ, ինչպէս եւ իր սնանկանալը. մոռնալով որ մեռնող թերթին վարիչը իվաղաց անտի սնանկ է մաւաւանդ բարոյական կողմէ, ու դաւաճան կարելի է անուանել այն ժողովուրդը որ կրնայ հանդուրժել ձգնաւորեաններու թերթերը, բայց ոչ այն որ կը հանդուրժէ զանոնք :

Մէկ անգամ գայլը աղւէսին կը յայտնէ որ «Ես կուզեմ Արկատիա երթալ, կսեն թէ հոն շատ աղէկ է, գետերն մեղր կը հոսի» : «Արկատիա»-ն հետը պիտի տանե՞ս», կը հարցնէ աղւէսը : «Իհարկ է» կը պատասխանէ գայլը :

«Է՛, ուր որ ալ երթաս այդ ակունքներովդ միասին, միշտ պիտի հաւածուիս» :

Զիմա ձգնաւորեանն է, ուր որ ալ երթայ թերթ հանելու, ինչ անուն ալ որ տայ թերթին միշտ պիտի իյնայ : Ապացոյց «Վատակ», «Տաւրոս», «Հայաթերթ», որոնք վրայ պիտի աւելնայ եւ անպտղաբեր «Արգաւանդ»-ը, անպէտ եւ յայտնի շարժաթաններու այդ նոր ժամադրավայրը :

19 հոկտ. վառնա Ասնդ

ԿԵԱՆՔԻ ԱԼԻՔՆԵՐՈՒՄ (Անյեւաչի յուշերից)

Որոնում էի ոսկր սիւնային, իր արտասովոր մանգալը ձեռին ու նրա հետքից ամինչ այսօր» գիշեր ու ցորեկ ման էի գալիս : Ուղում էի մահը գտնել, բանել նրա սառը ձեռքերից և խնդրել, որ ինձ էլ, ինձ էլ իւր հետ տանի, վերջ գնելով երբեք անգին, այժմ չնչին ու տարաբախտ կեանքիս :

Բայց ո՞ր, չկար մահը : Ոչ մանկական խաղի օրերում, ոչ պատանի երազ ժամերում, ոչ էլ տանջանքի ժանրոտ շերտերում... նա չէր երեւում :

Լայնատարած ծովերի վերայ, արեւ-լուսնի տակ—վիթխարի այիք, կատաղի մրրիկ, մերթ իրար դարնում, մերթ իրար տեղ տալիս, անդուժող իջնում, հանգստանում— ինձ օրորում, նինջ էին բաշխում, ջինջ ու խառնակի :

Ոչ բարձրաբերձ, ձիւնոտ լեռներում, ոչ էլ նեղ ու մութ կիրճ—անդուժներում— նա չկար : Ո՞ր արձաքանք, անմիտ մեղեղի ինձ բանասարկում գուրս էին վառում :

Ու ելայ, գնացի քանի մը անգամ Ռազմի Աստուծուն, որ ողորմած է— ինչպէս շատերին, ծուկի ծնկեցի, գուրս քարերին տալով խուկի խընկեցի, խուկի վառօդի— աղաչանք, պաղատանք, որ ինձ ցոյց տայ յաւելթական ոյժը՝ սայրատուր, օրհնեալ՝ դերանդիքի, բայց ինձ չանսաց դարձաւ ու սասց :

— «Զո՛ւր է, մահը իր ժամին» առանց աղերսի էլ մի օր կը հնձէ ձեռքերի փրկած անպէտ կեանքը, Ջանկ

Ղիւսինն նա չէ՛ մտնելու : Եւ դու, որ նոր ես կեանքի չէ՛մքին որ դրեւ, ինչո՞ւ չես ուղում ապրել, ինչո՞ւ չես ուղում ականջ դնել կեանքի քաղցր՝ երգ հրապոյրին... »

Եւ այնուհետ մի ձայն սքանչելի, նւագում էր ինձ յուսալից կեանքիս, մենից զգայուն երգը ու յուզում հողիս... Նա խոստանում, ցոյց էր տալիս հրաշալի պատկեր, ուր անձեռակերտ, առանց վրձինի եթերեան գոյներով նկարուում էին ազատութեան իրէջանքը և ապա յաւելթական լուսեղէն խաբսին յիւնած, շղարի տակից, էջնաղ ժպիտով քարերի անպայման յայ էր ներշնչում :

Եւ ես անձեռուրաց, որոշեցի մարդկանց մէջ մանկ կեանքը ցրտալու, որ այն պատկերը գտնեմ, ձեռք բերեմ :

Ո՞ր էին, ո՞ր իրէջանքը, Ո՞ր էր կոյսի անմեղ աչերը, անխախտ յոյսն ու սէրը յաւիտեանակա : Ինչ էրաւ լուսազգեաց այն խաբսինը... Ես չգտայ : Ա՛խ, մարդիկ չունէին... »

Ես կեանք եմ առել ու անել, իրէջանքս հանելու համար, Ես ուղում էի ինքս ուղղեմ կեանքիս ընթացքը ահեղ յորձանքում : Ուղում էի ինքս հարթել այն միակ ուղին, որը տանում էր զղձերիս վառվառն, լոյսախաբար :

Երբեք եմ պատուով, ու ներկայ «օրհասիս» վերջին վայրկեանով, որ ոսկու շղեղը, եւս, փառք, աստիճան ինձ չէին գրաւում և ամենուն չէին նշանակաւած անցած կեանքիս անշէլ ըզձերիս վկայականում, ըստ ուղում էի արցունքներ սրբել, կեանք գոնել խուճկ կանգնել արեան կերպի գէ՛մ : Ուղում էի թշտառութեան աղբիւրներ գոցել, սարկութեան լրթաներ փչրել : Ուղում էի զրկել կայծակ տեղալ աշխարհը շուտ սալ բռնութեան գլխին, որ որը և անք երկիրը ժպտար... »

Սակայն խաւար հոսանքը ծանա, դժոխային ի դերեւ հանեց իմ վերջին ձիգը, ջախջախեց ու ոչնչացրեց վերջին ոյժերիս—վերջին մնացորդը :

Վիժմ յուսախաբ, հիւսնոյ մահնի մէջ, ես ձեռքս ել եմ, ձեռ եմ տարածում : Էլ ինչո՞ւ է պէտք ինձ իմ կեանքը, կամ ինչ յոյսերով ես երկունին նայեմ : Չկան այլեւս շողողուն յոյսեր : Էլ ինչո՞ւ ապրել և ինչ անուանել այսուհետեւ, սեւցած արևուտ՝ ոչ, չեմ թողնել ձեզ՝ փայլալայտ պաշտպանի ըզձեր միայնակ հետանաք : Ես էլ ձեզ հետ, ես էլ ձեզ հետ կը թողնեմ աշխարհ, ու կիջնեմ այստեղ՝ մեզ օտար հողում, անշուք դերեզման :

Եւ եթէ ձիւտ է որ մարդու հոգին ծնում մեռնում է ու կենդանանում, —Դո՛ւ ընա չը դառնաս, իմ անրիճ հոգի, նորից այս աշխարհ : այս սարսափելի չիտի քառօր :

Եւ ուժասպառ հեռուն ես՝ տեսնում եմ. —հա մահը : Նա ինձ մօտէ՛ — Այո՛, քննաք միասին :

Ահա բարձրացաւ մահւան գերանդին ու կիսաբոլոր իջնում է վրաս կեանքիս հանդոյցը խեղու համար :

Եւ յանկարձ «կո՛ց» որոտնգոտս որոտում է իմ ծանօթ ձայնը. —

— «Ահ հեռացի՛ր, ե՛լ այստեղից : դու մշտնջնաւոր սառնութիւն, մահու պահապան : Մի՛թէ՛ չցիտես, որ այս կեանքը քեզ չէ պատկանում, և քանի անգամ հրամայեմ է չմերձանալ ու սուտերել անգամ քեզ արգիլ-

առաջին և հետո աշտուղից : Այնքան շարժած եմ, մահ ու բազմապատկար շարժումներով սրտ փոխարէն մաս կանգնած էր անհողորդ հսկան, անվերջ օգին : Նա բոլորեալ էր լուսոյ շարժումը ու պէ՛տ կայծող շեշտ էր ցայտում :

Այն նա էր, նա, երազներու օգիցող հին, հասունութեանս ընկերուհին :

— Ազգում ես, որտաց նա, յանցանքիդ ծանրութիւնը : Մա՞հ էիր խնդրում ձանձրացած կեանքիդ : Սեւ խոնդոտները քեզ նետ կասեցրին քո իրիւրի միակ ուղիքից, ՚՛ու վհատել են : —

Մի ձայն, մի ծպտուն չը հանցի, ամալում էիր ...

«Յիշում ես, շարունակեց նա, երբ ազատութեան զէնքերը հագար, ու նոյն զէնքերի վրայ երգում արիւր — անվերջ կուր սրբազան անզանց ուխտը կնքեցիր : Յիշում ես երբ ծնկաչոք խոստովանեցիր, որ կեանքդ այժմ ես քեզ չէ պատճանում : Որ քո կեանքը իդէալի մարմնացման փայլուն գրաւական պէտք է լինի : Ուրեմն, թող որ այդ կեանքը խոնդոտների բովից էլ անցնի : Այն որ ոսկին՝ զտելու համար դժոխային հուրն են : ձգում եւ ապա աղնի մետաղից յաղթանակի սայլն ու խոյր պատրաստում :

«Ի՞նչ է խոչնդոտը ըստինքեան այն կորով արիւթեան առաջ, որ քեզ է տուած : Եւ, լարիւր ոյգերդ եւ նետերդ վերադին նոյն իսկ խոչնդոտների անողորմ ծովը : որ քեզ վհատեցրին : Ո՞րն է այն սեւաճէտ խոչնդոտը, որ ժիւր ու խիզախ յուճկու թափից չնկնէ : Ո՞րն է այն ժանգախոյս պողպատը, որ անվերջ կաթիլներին՝ յաբառեւ յամառի : Ռազմիւր, մրցիւր շարունակ, անձանձիր, անվհատ, Ընդձիտ դուրս նետիւր վըհատումն բառը քո բառարանից և մի էլ ճանաչիր մարտի ասպարէզում գոյութիւնը վեհերստ խօսքի :

«Եւ եթէ մի օր, մի ժամ-վայրկեան ձանձրանաս կուրից ու վհատած մահու կմարտից «փրկութիւն» խնդրես — անիծեալ լինիս ու խնդար թափասես երկրէ երկիր : Հանգստութիւն չգտնես, ոչ երկրի վերայ և ոչ էլ անասանման ոչնչութեան մէջ : Եւ թող, պատմութեան այն թշուառի, ծեր տարագիր, մեղապարտ ոգու անէ՛ծքն ու պատիժը լուծւած համարի ու քեզ վիճակի սպասել անհամբեր վերջը մեր հողագնդին :

ՄՈՒԿԱԿԱՆ ՄԻՍՏԷՄ

ձառնական զօրավարները և ծովակալները այնքան սարսափ ազդած են ուս զօրքերուն վրայ, որ ուսս վերական իշխանութիւնները ամեն օր ճարտարի յայտնի զօրավարի մահը կր հոչակեն սարսափած ուս զօրքերու սիրտերը խաղաղացնելու համար : Օր մը Քուրօքին կապանուրի կամ հիւանդութեանէ կը մեռնի, օր մը թօգո, օր մը Օթու, օր մը Նօտղու օր մը Քամիմուրա, վերջապէս այդ լուարերուն քիչ մը հաւատարուն պէս մարդը պիտի այն համոզման գայ որ այլեւս ճարտարացի ոչ զօրավար մնացեր է և ոչ ծովակալ, թէեւ իրողութեան մէջ ճարտիւր այդ արժեւորումներն ալ ողջ առողջ առանց փաթիլի կաշխատին իրենց առջեւ զըրուած մեծ պատերազմին մեծ ու բարձր

խնդիրը լուծել :

Ընտանիքներուն մէջ սովորութիւն կայ մանուկներուն վրա սարսափ ազդած մարդիկը և կենդանիները միշտ մեռած, ոչնչացած և կորսուած հրոչակել որպէս զի մանուկները խաղաղ և հանգիստ օր և գիշեր անցնեն, զերծ ըլլան ներքին սարսափէ ու ահ ու դողէ :

Ռուս զինուորական իշխանութիւնը և մամուլի մէջ մասը այս սիւտէմին կը հետեւի սարսափի շարագուծ երազներով տանջող ժողովուրդը և զօրքը խաղաղացնելու համար, չը մեռնելով որ այդ սիւտէմով ընդհակառակը ճարտն զօրավարներուն անուրութիւնը աւելի կը զօրացնէ, որով սուս մեռած թօգոն յանկարծ նոր յաղթութիւն մը կը տանի, Սքու կամ Քուրօքին նոր սուս բանակներ կը փչընեն ու առասպելական անմեռանելի անձեռնմխելի հերոսներուն շարքը անցնելով բոլորովին կը սմբեցնեն ուսներու ներկայիս մէջ թուլացած և սմբած հոգին :

ՊԱՐԻՉԻ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԸ

Անցեալ օրվան մեր Պարիզի աշխատակիցը՝ Իրէզնեանի սըզգեղ գործերի աւթիւ գրած թղթակցութիւններին մէջ մի կերպ կարծես ուզում էր արգարացնել Պարիզում ապրող հայ խմբագիրներին, որոնք ինչ ինչ պատճառներով, մեզ համար բոլորովին անարժէք, պարտաւոր են լուռ լինել պահպանել տեղի ունեցած տղեղ երեւոյթների հանդէպ : և մամուլի իրական կոչումը անպատում :

Պարիզում ապրում են Չերազ, Բասմաշեան, Չորանեան, Փարիզին Մեծատուրեան : Գրանք հայ մամուլի ներկայացուցիչներ են : Գրանցից մինը՝ Գարեգին Մեծատուրեան միայն ժամանակին մտածել է զգուշացնել հայ օրքերը յանձնելու մասին, իսկ միւսները կամ լուռ են, կամ փառաբանել են էզնեանների որբասիրութիւնը որը վերջերս այդքան անպատուաբեր կերպով վերջացու :

Նոյն թղթակիցը՝ կարծես պարիզեան հայ խմբագիրների գատապարտելի լուռութիւնը և անտարբերութիւնը աւելի մեղմացնելու համար, կասկած է յայտնում որ տեղական հայ խմբագիրների մէջ բաժանում, գծաւորութիւններ գցելու պատճառները հենց այդ էզնեաններն են, հասկացնելու ուղեւոր որ էզնեանները այդ անում են իրենց շահատակութիւնները : աւելի անարգել կերպով կատարելու համար :

Մենք ընդունում ենք որ հայ էզնեանները իրենց նպատակներին հասնելու համար այդ քստորացնող տակադիտիւն կարող են հետեւել, բայց մենք երբեք չենք կարող համաձայնել որ Չերազ, Չորանեան և Բասմաշեան, հնթարկվելով այդ շահախնդրա-

կան տակադիտիւն իրար աչքաքօփ կատեն որ չը կարողանան ազնակ համարձակ, ձեռք ձեռքի տալով ապարիզ գորս գառն իրենց օրգաններում ջախջախելու այն մարդկանց, որոնք բացի ոսկիի պարկից, ուրիշ ոչինչ ունեն :

Պարիզում շորս հայկական օրգաններ գոյութիւն ունեն, և տեղական հարցերը յանկարծ արժարժում են հետաւնելը գտնելով մամուլի մէջ : Չերազ իր թերթի մէջ հայ պարուպահու մասին ահագին յօդաւանդ էր գրում, և այսօր չէ համարձակվում էզնեանների մասին մի տող գրիլ և ցոյց տալ նրա իրական գոյնը : Չորանեան իր օրգանում ահագին լարդ հարցեր էր շօշուփում և այսօր մի քանի տող չէ ներդրում այն հարցին՝ թէ ինչպէս կարելի է Պարիզի հայ գաղութի ներքին գործերը կարգաւորել ի նպաստ տեղական իրական հայ գաղութի :

Բասմաշեան թէ նոսրութիւնով և թէ նոր բաներով է զբաղվում շատ անգամ բոլորովին անպէտք բաներով և հրասպարակով դուրս չէ գալիս Պարիզի հայ գործերի մասին գոնէ ամսական մի քանիկ տալու :

Ամենքն էլ մեծ, վերացական գործերով են զբաղված, ոչ ոք չէ ուզում Պարիզի հայ կեանքի իրականութեան մէջ մտնել, ինչով բացատրել պարիզեան հայ խմբագիրների այս սփիւքեան լուռութիւնը տեղական հայ կեանքի մասին : Մենք տակամայլց ստած ենք որ շափել ձեր թղթակիցը կարծես հենց մեղադրելու համար անհիմն արդարացումներ մէջ տեղ բերէր մեր պաշտօն : Գժգոհութիւնը ցուցնել այն պարոններին որոնք պարիզեան հայ մամուլի ներկայացուցիչներն են, մեր անկողմ գժգոհութիւնը և պահանջել նրանցից որ զբաղվին հայ իրական կեանքով, մանաւանդ պարիզեան հայ կեանքով :

Այդպէսով միայն նրանք կարող են սանձահարել զանազան էզնեաններին և ըմբռնել տալ նրանց թէ հայ մամուլի ներկայացուցիչը ուր որ էլ լինի նա միշտ պէտք է մաքառէ հայ ամենազօրաւոր համարված իսկ անհատներին դէմ, որոնք իրենց նէութեան եղանակով վնասակար են հանգրտանում հայ համայնքին : ուրեմն և ամբողջ հայ ժողովրդին :

Մեզ համար բոլորովին անհասկանալի է և անմարտելի այն՝ թէ կարգաւոր է հայ խմբագիր լինել, անսնել մի հար հանրութեան վնասակար անհատ և նրա վնասակարութիւնը չը մատնանշել, նրան իր ծուռ ումուռ ստորին և խարբայ միջոցներով հասած բարձ-

րութիւնից չը ապագայի, չը նետել իրեն արժանի ցիխտա անկիւնը :

Տարիներ առաջ պարիզեան մի քանի խմբագիրներ ուղղակի կամ անուղղակի միջոցներով, իրենց գաղութի ներքին տղեղ զօրքերը հետաքննելու միջոցով է իրազուում մաքրել : մենք ստիպված եղանք մի խիստ յօդաւանդ և զգուշ Պարիզի ամբողջ հայ խմբագիրներին, որովհետեւ նկատեցինք թէ այդ պարոնները ինչ ինչ հանցանքներով ուղում են թագնված մեալ Պարիզեան շոշուփից :

Այսօր մենք մեր խորին զգօտնքըն ենք յայտնում, որ այդ պարոնները բոլորովին չեն կրելու մի բան օրգաններում, ինչպէս որ պահանջում է Պարիզի հայ գաղութի շահը և իրենց հետաւոր պաշտօնակիցներին են ստիպում մաքրել այն ցիխի կոյտը, որը հետզհետէ բարձրանում խոշորանում է հենց այդ պարոնների ապիկարութեան սարկահոգիւթեան և զանազան աննեթի հանցանքներով զեկաւարվելու շնորհիւ :

Մենք խիստ լեզուով ենք թօսում մեր պաշտօնակիցներին վերաբերմամբ, աւելի խիստ քան էզնեանի, որովհետեւ հայ ինտիլիգենտ դասակարգը էզնեաններին ոչինչ չէ սպասում, որովհետեւ գիտէ որ էզնեանները հասարակութեան ներկայանում են իրրեւ էզնեաններ բայց ոչ հայ հասարակութեան միտքը, բարոյականը շտկողներ, մինչդեռ հայ խմբագիրները ապարիզ են գալիս իրրեւ հանրային և նրա օգտին ծառայող որոշ ծրագիրներով ու զոհողութիւններ պատրաստ մարդիկ :

ԲԱԼԹԻԿԵԱՆ ՆԱԽԱՏՈՐՄԻՂԸ

Ռուս կառավարութիւնը երկար ու բազակ վարանումներէ վերջ Բալթիկեան նաւատորմի զրկեց Մայրագոյն Արեւելք, որը չենք գիտեր թէ դեռ երբ պիտի հասնի իր նպատակակետ Նանակած տեղը, ու դեռ ո՞վ գիտէ որ չափ փորձանքներու պիտի հանգրպի :

Ռուսերը դեռ Բալթիկեան նաւատորմի զոհ ճամբու չը գրած անոր վրան մեծ յոյսեր ունէին և կրկարձէին թէ այդ նաւատորմի զարգէն կը բաւէ ճարտական ծովային ուժին հաւասար ուժ մը, նոյնիսկ զերազանցող ուժ մը ներկայացնել ճարտիւր սահմանակից ջուրերու մէջ :

Մակայն ճամբայ ինկած նաւատորմի զոհ տեղ չի հասած ուսական մաճուրը սկսած է քարոյել ուրիշ նաւատորմի մը ևս, եւրոպական նաւատորմի անունով :

կազմակերպել և գարնանը հաս-
ցնել Մայրապոլս Արեւելք:

Այս առաջարկութիւնը ինքնու-
տինքեան կուգայ փաստելու թէ
ուսուցիչները այժմէն իսկ համոզուած
են որ Բալթիկեան նաւատորմի-
ղըն ալ շը բաւեր ճարտի ծովա-
յին զօրութիւնը թուլցնելու կամ
ճարտը խոնարհնցնելու համար:

Անգլիական լուրջ թերթերը
ժամանակին լուրջ յօդածներով
յայտարարեցին որ Բալթիկեան
նաւատորմիչը ուշ մնաց, Բորթ-
Արթուրի և Վլադիմիր Թոքի նա-
ւատորմիչները գեռ չը ոչնչացած
պէտք էր սր այդ նաւատորմիչը
տեղ հասնէր, որպէս զի կարե-
նար չօշոյի ի ծառայութիւն մա-
տուցանել ուսուցիչներն:

Ինչպէս կերելի այդ քննադա-
տութիւններու և ուսուցիչը նոր
ստացած տեղեկութիւնները ճա-
րտական ծովային ուժի մասին
ուսուցիչները պիտի ըս-
տիպեն չը գոհանալ Բալթիկեան
նաւատորմիչով և նոր նաւարա-
ծին մը եւս կազմակերպել:

Բացի նոր նաւատորմիչի ծը-
րագրէն ուսուցիչները թիւնը
պարտաւորուեցաւ Սիպերիայ եր-
կաթուղիին որոշ սահմանի մը
մէջ, երկրորդ գիծ մը ևս չի ներ-
դրուած և մեծ քանակութեամբ
զինուոր տեղափոխել պատերազմի
վայրը: Մինչդեռ առաջ, երբ
Երկրակալ մամուլը կը յայտա-
քարէր թէ այդ երկաթուղին չի
կրնար կարեւոր քանակութեամբ
զօրք տեղափոխել կարճ ժամա-
նակի մը մէջ, ուսուցիչները
պարծենալով կորոտար թէ իրենք
կրնան ուղածուան չափ զօրք հաս-
ցնել պատերազմի դաշտ:

Այս երկու կարեւոր երեւոյթ-
ներէն կերելի թէ օտար, ի թիւս
որոց և անգլիական մամուլը, ա-
ռանց ո եւ թշնամութեան ուս-
ակաւն պատերազմը վարողներու
թերութիւնները կը մատնանչեն,
ուսուցիչները առաջ կը կատարի և
վերջի վերջոյ, երբ կառավարու-
թիւնը կորոշէ օտար մամուլին
կողմէն ցոյց տրուած պակասու-
թիւնները շտկել, կելլայ կը խօ-
սի իրական պահանջներու մասին:

Այսպէս թէ այնպէս պատե-
րազմի վայրէն եկած բոլոր տե-
ղեկութիւնները, հակառակ այդ
պատեթեանց պաշտօնական մար-
դոց յայտարարութիւններու, ուսու-
ցիչները կը շարունակեն իրենց
կապացուցանեն թէ իրօք պատերազմը գեռ եր-
կար պիտի տեւէ և վայ յաղթու-
ղին պիտի ըլլայ, թէեւ յաղթողն
ալ ինքիւնքը շտկելու համար
չատ ժամանակի պէտքը պիտի
ունենայ:

Ճարտանցիները ուսուցիչի ի-
րարանցումի մէջ չեն երեւիր.
զգնէ մամուլը այդ մասին որոշ

լուրեր չի տար: Այս երեւոյ-
թը երկու կերպ կարելի է բա-
ցարել. մէկ որ ճարտարաբան-
րովին ուժասպառ եղած է և ալ
բան մը չի կրնար աւելցնել իր
ունեցածին վրայ, մէկ ալ որ ան
նախօք պատրաստուած է մեծ
լրջութեամբ իր և թշնամիին ու-
ժերը հասկնալէ ուսուցիչներէ
յետոյ:

Այս վերջին բացատրութիւնը
աւելի ճիշտ կերելի: Ճարտի
մտատանջութիւն պատճառովը
Բորթ-Արթուրի և Ե անոր անկու-
մը մօտիկ կերելի. զոնէ ստաց-
ուած տեղեկութիւններուն հա-
մաձայն:

Բորթ-Արթուրի անկումէն յե-
տոյ ճարտական ցամաքային մեծ
քանակութեամբ զօրք ազատ պի-
տի ըլլայ մարքիզ Օյամային օգ-
նութեան հասնելու, իսկ Թօքո-
յին նաւատորմիչն ալ, որուն մէկ
քանի նաւերը արդէն վերանո-
րողման զրկուած են, իր ամբողջ
կազմովը պիտի գիմաւորէ Բալ-
թիկեան նաւատորմիչը համայն
մարդկութեան սխրագործութեան
նոր սխրագործներ և իր հայրե-
նիքին մեծ օգուտներ պատճա-
ռելու համար:

ԳԵՂԵՑԻԿ ԱՌԱՋԱՐԿ ՄԸ

Ստոյգ աղբիւրէ մը ուրախու-
թեամբ լսեցինք թէ՛ քաղաքիս
հայ վաճառականներէն Տիար
Սարգիս Գոյումեան մտադրած
է՛ յառաջիկայ գարնան՝ արդի
խարխուլ մանկապարտէզը քա-
կելով նոր մը կառուցանել տալ:

Այս առաջարկութիւնը յոյժ
զովելի և միանգամայն յոյժ օրի-
նակելի է. սակայն, ըստ մեզ,
աւելի արդիւնաւոր պիտի հան-
դիսանայ՝ եթէ իրեն նպատակ
ունենայ նաեւ աղջկանց նախա-
կրթարանի մը շինութիւնը: Ա-
մէն ուսուցիչը հայ քաջ գիտէ
որ հիմակուան աղջկանց դպրո-
ցը՝ Հոբիփիսիանց վարժարանը,
հինաւուրց չէնք մըն է, ցած,
խոնաւ, արեւուն կենարար լոյ-
սէն զուրկ, որ այնքան տարինե-
րէ ի վեր խաթարած է քանի մը
սերունդի մարմինը, հետեւա-
բար և՛ միտքն ու հոգին: Ի չը
գոյէ կլորիկ գումարի մը, ցարդ
կարելի չէ՛ եղած հիմնովին քա-
կել այն անպէտք չէնքը և անոր
տեղը նոր մը կանգնել, որ հա-
մապատասխանէ, իր բոլոր հան-
գամանքնիրով, մանկավարժու-
թեան արդի պահանջներուն:

Մենք կը խորհինք թէ Ռուսու-
ցիին, որ 5—6 տարի առաջ, լա-
ւական գեղեցիկ արական վար-
ժարան մը շինած է, կրնայ աղջ-
կանց համար ալ նոր կրթարան
մը կանգնել:

Արդարեւ, ի՞նչու դեռապիթիթ
աղջիկները հանգստաւէտ վար-
ժարանի մը կարօտին և մանչերը
միայն վայելեն վայելուչ դպրոց
մը. միթէ, յաջա Ռուսուցիներ-
բուն, մատղաշուկ աղջիկները
արհամարհելի քանակ մը կը
ներկայացնեն:

Ճամբիտ երախտաւոր մը,
պահպան հրեշտակ մը պիտի
ըլլայ Տիար Սարգիս Գոյումեան
Ռուսուցիի դեռատի հայուհինե-
րուն համար. եթէ բարեհաճի ե-
կեղեցուն շրջապատին մէջ,
մանչերու դպրոցին քովիկը, շի-
նել տալ իրական վարժարան մը,
որ միանգամայն ծառայէ իբր
մանկապարտէզ՝ Անշո՛ւշտ, ուս-
ուցիչներու միւս հարուստներն
ալ՝ ինչպէս և էսնաֆ դասա-
կարգն՝ պիտի փութան իրենց
նիւթական նպաստը ընձեռել
սոյն հանրօգուտ հաստատու-
թեան:

Լիայոյս ենք թէ Տիար Սար-
գիս Գոյումեան պիտի հաճի ի
նկատի աւելել մեր առաջարկը,
և իր ծննդավայրը պիտի օժտէ
գեղեցիկ կրթարանով, որ աղ-
ջիկ պիտի ընծայէ միտքով,
սիրտով և մարմնով տաղջի հա-
յուհիներ:

Սպասե՛նք և յուսա՛նք
Լաւաքս
18 հոկտ.
Ռուսուցի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Նոյեմբեր 17ին կը հեռագրին որ
յոյն 8 եպիսկոպոսներ սինօղի պատ-
րիարքին հակառակորդ անդամները
նախարարին յայտնած են որ կառա-
վարութեան փափագին համաձայն ի-
րենք պատրաստ են կրկին պաշտօնին
չարունակել, սակայն պատրիարքը
մերժած է յայտարարելով որ անոնցմէ
իրեն հասած վիրաւորանքները ան-
կարելի կը դարձնեն այլեւս իրարու
հետ աշխատիլ:

ՌՈՒՍՈՒ

Եթէ զիսթփօններուն ճարին առա-
ջարկուած բարենորոգման ծրագիրը
ընդունուի, Յարը 1905ի փետրվար
15ին համայնական ինքնավարու-
թիւն պիտի հռչակէ. այսինքն ճոր-
տերու ազատութեան յիշատակելի օրը:
— Ռուսական զօրախուժը մը հա-
սեր է Աւգանիսթանի սահմանները:
Սայթթաթի աւգան կառավարիչը հը-
րաման ստացած է ուսուցիչու սահ-
մանը խանգարելու ու է փորձին դի-
մադրել: Սայթթաթի կառավարիչը և Մայ
մուսի հրամանատարը հրաման ըն-
դունած են քաղաքները ամրացնել:

ՌՈՒՍ—ՋԱՐՈՆԱԿԱՆ
Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

Թանի թղթակիցը կը հաղորդէ որ
ճարտական կարեւոր դիւանագլա
Մարքիզ Սայի անողական վիճակին

բարոքման պատրուակով Շակայ
գացած է Չին կառավարութեան հետ
գաղտնի բանակցութիւններ կատա-
րելու համար:

— Ճարտանցիները գրաւեր են Բ.
Արթուրի «205» մեթր անուն կողմ
ամբողջութեամբ բաւական խոշոր թիւով
զոն տալէ վերջը:

— Ճարտական տեղեկութիւննե-
րու համաձայն Բորթ-Արթուրի պա-
շարումէն սկսեալ մինչեւ օրս ճար-
տանցիները 25000 մարդ զոն տուեր են:

ԿԸ ՓՆՏՈՒՈՒ

Սերաստացի Միհրան Մ. Ժամբը-
եան՝ միջանասակ և թիւադէմ 35 տա-
րեկան երիտասարդ մը, որ Պանգո-
յի ցոյցէն 3 օր վերջը անյայտացրել
կը խնդրուի ով որ գիտէ անոր հաս-
ցէն թող իմացնէ իր ծնողներուն, որք
այժմ վառնա կը գտնուին, հետեւեալ
հասցէին:

Մուսալլա փոստահանէին դիմաց
կօշիկի ներկարար Նշան Մ. Ժամկոյեան
(Պուլկարիա) Վառնա

ԲԱՏԱՆՊՐԴԵՐՈՒՆ

Տարին վերջնայու մօտ է և մեր
բաժանորդներէն շատերը դեռ իրենց
բաժանագրիները չեն վճարած:

Կան և այնպիսիները որոնք երկու
տարեկան պարտք ունին: Ինչպէս
կերելի այդ մարդիկը կը կարծեն թէ
մենք թուղթը տեւերը ճրի կառնենք,
գրաշարները ու տպարաններն ալ ճրի
կախատին և մենք հաց չենք ուտեր,
այլ օղով կապրինք:
Քիչ մը ազնիւ ըլլալու են մեր ըն-
վճարող բաժանորդները, մանաւնդ
անոր համար որ մենք երբէք առանց
բաժանորդներու պահանջին թերթ
չենք զրկեր մարդու: Պահանջողը և
իր պարտականութիւնը կատարելու
տարրական զգացումէն զուրկ չը պի-
տի ըլլայ:

Խմբագրութիւն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՐՏԷՂԸ

Ծնորհակալութեամբ ընդունե-
ցինք ձայ Ուսանողական Միու-
թեան հրատարակած Հայաստանի
Քարտէզը, շքեղ կազմով:

Քարտէզի գինն է մէկ ֆրանկ
Ռուսաստանում կէս ռուպլ: Ամեն
հայ պարտաւոր է ունենալ այս
սիրուն և աժան ու բաւական խը-
նամքով պատրաստուած քար-
տէզը:

Հասցէ՝
Իւնիօն Տէ Էսիւսեան Արեւելիկ
Տ'kovoy
Բիւ ղ ղեֆոյ ռը Շիւի
ՃԸՆԷՎ
Եւ Վառնայի մէջ կը ծախուի
«Բարկէն Սիւնի» ընթերցարանի
մէջ:

Отговорниѣ
Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна